



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

01.11.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/76

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի
դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ներկայացուցիչներ՝

Գ. Հարությունյանի (լիազորագիր, տրված՝ 29.10.2019թ.)

Ռ. Դարբինյանի (լիազորագիր, տրված՝ 29.10.2019թ.)

«Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ -ի ներկայացուցիչներ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 28.10.2019թ.)

Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 28.10.2019թ.)

քննելով ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար
անվտանգության ռենտգեն սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ
ՔԿԾ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում

«Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից 24.10.2019թ. ներկայացված (24.10.2019թ. վարույթ ընդունված) բողոքը և «Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից 28.10.2019թ. ներկայացված (28.10.2019թ. վարույթ ընդունված) համանման բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/76 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն 24.10.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության կարիքների համար՝ անվտանգության ռենտգեն սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթով հայտերի բացումը նշանակված է 25.10.2019թ.:

Համաձայն Ընթացակարգի հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի»՝ սահմանվել են այնպիսի խտրական պայմաններ, որոնց դեպքում խախտվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, օրինակ՝ որպես ապրանքի մատակարարման ժամկետ սահմանվել է հետևյալը, որ Պայմանագիրը ուժի մեջ է մտնում՝ կնքելուց հետո 35 օրվա ընթացքում:

«Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» տեխնիկական նկարագրով սահմանվել են այնպիսի ձևական պահանջներ, որոնք հնարավորություն են տալիս վերը նշված մրցույթին մասնակցելու ընդամենը մեկ ընկերության, օրինակ՝

- ✓ կոնվեյերի արագությունը՝ 0.20 մ / վ, երկկողմանի սկան,
- ✓ կոնվեյերի բարձրությունը՝ 693 մմ կամ համարժեք,
- ✓ ներթափանցում՝ 38 մմ պողպատե վահանակ,
- ✓ գեներատորի անոդի լարումը՝ 160 ԿՎ (աշխատում է 150 ԿՎ-ում),
- ✓ շրջակա միջավայրի ջերմաստիճանը /խոնավությունը՝ -10°C ~ +45°C/5% ~ 95% (առանց կոնդենստի),

✓ պահպանման ջերմաստիճանը /խոնավությունը՝-40 60+60 °C/5%~95% առանց կոնդենստի) և այլն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը...:

Ընկերությունը գտնում է, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերը կազմելիս՝ թույլ է տրվել Օրենքի վերոշարադրված պահանջների խախտում:

Մասնավորապես, Ընթացակարգի հրավերով ապրանքի տեխնիկական բնութագիրը նկարագրված է հնարավորինս մանրամասն, սակայն խնդիրը նրանում է, որ առանձին սարքերի, սարքավորումների և դրանց հնարավորությունների պարամետրերին ներկայացված են այնպիսի պահանջներ (որոշ դեպքերում շեղումը՝ ընդամենը 5%), որոնք այլընտրանքի հնարավորություն չեն տալիս և ենթադրվում է, որ այդ պահանջները սահմանելիս՝ պատվիրատուն հիմք է ընդունել որևէ կոնկրետ ֆիրմայի պատկանող մոդելի տվյալներ, սակայն շուկայում առկա են ձեռքբերվող ապրանքին ֆունկցիոնալ առումով բացարձակապես չզիջող բազմաթիվ այլ մոդելներ, որոնք իրենց պարամետրերով տարբերվում են պահանջվող տվյալներից, սակայն լիովին կարող են ապահովել անվտանգության ռենտգեն սարքերի օգտագործման արդյունքում պատվիրատուի կողմից

ակնկալվող արդյունքները: Բացի այդ, մրցակցությունը սահմանափակող տվյալներ են նախատեսված նաև հիմնական սարքին օժանդակող համակարգչի, մոնիտորի և անխափան սնուցման սարքի համար՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ դրանց գործառույթը ընդամենը հիմնական սարքի գործունեությանն օժանդակելն է և եթե հիմնական սարքը ֆունկցիոնալ առումով իրականացնում է իր առջև դրված խնդիրը, ապա օժանդակ սարքերի չափի, քաշի կամ տեսքի համար կոնկրետ պահանջ սահմանելը չի առնվազն չի բխում գնումներին մասնակցելու հավասարության սկզբունքից և տվյալ դեպքում նախընտրելի կլիներ նշել ֆիրմային անվանումը՝ «կամ համարժեքը» արտահայտությամբ, որպեսզի մասնակցի համար պարզ լիներ, կոնկրետ ինչ տեսակի սարքավորման մասին է խոսքը:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախատրակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Հաշվի առնելով, որ Ընթացակարգի հայտերի ներկայացման ժամկետը դեռևս ավարտված չէ, իսկ Հրավերը հակասում է Օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին, ուստի ղեկավարվելով Օրենքի ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության պահանջներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկարգով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգը հայտարարել չկայացած:

«Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.10.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Կոնսէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Կոնսէլ» ՍՊԸ-ն 28.10.2019թ. ներկայացրած համանման բողոքով հայտնել է, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի շրջանակներում չեն պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված դրույթները:

Մասնավորապես, գնման առարկան այնպես է ձևակերպված, որ սահմանափակում է հնարավոր մասնակից սուբյեկտների շրջանակը: Այսպես, նույն սարքավորումներից, որոնք նույն որակով կարող են իրականացնել նույն գործառույթները, կարող են մատակարարել մի քանի կազմակերպություն, սակայն առկա ձևակերպումների պատճառով դրանց մեծամասնությունը չի կարող հայտ ներկայացնել:

Կազմակերպությունը խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին վերանայել «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման առարկայի տեխնիկական բնութագիրը կամ անվավեր ճանաչել «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով մրցույթը:

3. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.10.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր առարկել են բողոքի դեմ՝ հայտնելով, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը խտրական չէ և կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխան:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/76 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/76 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

2. Ընթացակարգի հրավերով հաստատվել է գնման առարկայի տեխնիկական բնութագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից 24.10.2019թ. ներկայացված բողոքը, «Կոնսէլ» ՍՊԸ-ի 28.10.2019թ. ներկայացրած համանման բողոքը, «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի,

ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից իր կարիքների համար ռենտգեն սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերով հաստատվել է գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

<p>Անվտանգության ռենտգեն սարքեր</p>	<ul style="list-style-type: none"> • Ռենտգենյան անվտանգության ստուգման սարքավորումները բաղկացած են բեռնախցիկի փոխակրիչ մասից, ռենտգենյան աղբյուրից և հսկիչ մասից, ազդանշանային հավաքման և մշակման և փոխանցման մասերից, պատկերների մշակման և էլեկտրական կառավարման մասերից: • Կրկնակի էներգիայի ներթափանցման համակարգ • TIP ծրագիր • Պարզ և հստակ պատկեր • Սկանավորված պատկերը կարող է խոշորացվել մինչև 64 անգամ • Մասնակի խոշորացում մինչև 3 անգամ • Պատկերի մշակման 13 գործառույթներ և 6 տեսակ կեղծ գույն • Պատկերների գործածման հզոր ունակություն • Ճշգրիտ գծանշում Z7, Z8, Z9 նշանակում պայթուցիկ նյութերի եւ թմրամիջոցների համար • Windows 7, 64-բիթանոց օպերացիոն համակարգ
-------------------------------------	---

- Սկանավորված պատկերի ավտոմատ պահպանում
- Հեշտ օգտագործվող օպերացիոն համակարգ
- Վստահելի արտադրողականություն
- Նախատեսված է փոքր և միջին չափի իրերի, զենքի, պայթուցիկ նյութերի, թմրանյութերի և մաքսանենգության այլ ապրանքների առկայությունը ստուգելու համար:
- Հարմարավետ օգտագործման համար, ապահովում է իր դասում ամենամեծ արագությունն ու հայտնաբերման հնարավորությունները և առավելագույնս օգտագործում՝ հասանելի տարածքը:
- Հարմար է պորտֆելի, ձեռքի ուղեբեռի, փոստային ծանրոցների և այլ փոքր փաթեթների անվտանգության ստուգման համար:
- Կիրառման բնագավառը. ՀՀ ԱՆ Քրեակատարողական հիմնարկներ:

Տեխնիկական նկարագիր

- Թունելի չափը՝ 600 x 400 մմ կամ համարժեք,
- կոնվեյերի արագությունը՝ 0.20 մ / վ, երկկողմանի սկան
- կոնվեյերի բարձրությունը՝ 693 մմ կամ համարժեք,
- Առավելագույն բեռ՝ 170 կգ
- Լարերի լուծաչափ՝ 38AWG
- Տարածական լուծաչափ՝ ուղղահայաց : տրամագիծ 1.0 մմ , հորիզոնական : տրամագիծ 1.0 մմ
- Ներթափանցում՝ 38 մմ պողպատե վահանակ
- գեներատորի անոդի լարումը՝ 160 ԿՎ (աշխատում է 150 ԿՎ-ում)
- Սառեցման / օպերացիոն ցիկլ՝ յուղային սառեցում / 100%
- Պատկերի մշակում՝ գույն / սև և սպիտակ պատկեր, բացասական պատկեր, բարձր ներթափանցում, ցածր ներթափանցում, գերհզորացում, հիստոգրամիզմի հավասարեցում, ստուգում ետ / առաջ, ավտոմատ պահում պատկեր, կեղծ գույն, 90 աստիճանի ռոտացիոն պատկերներ, օրգանական / օրգանական գտում
- Խոշորացում՝ Փոփոխական խոշորացում մինչև X64, շարունակական խոշորացման աջակցում
- Պատկերի ստուգում՝ Պատկերի անընդհատ ստուգում
- Պահպանման հզորություն՝ Կարող է պահել ավելի քան 100,000 պատկեր
- ճառագայթման արտահոսք՝ <1 USv/h (շրջանակից 5 սմ հեռավորության վրա)՝ լիովին համապատասխան ճառագայթային անվտանգության միջազգային բոլոր պահանջներին:
- Ֆիլմի անվտանգություն՝ Համաձայն ASA / ISO1600 ֆիլմերի անվտանգության ստանդարտի
- Համակարգի գործառույթ՝ F1, F2, F3 ծրագրավորվող ստեղծող, բարձր խտության ազդանշանը , TIP ; ամսաթիվը / ժամանակը ցուցադրելը , ուղեբեռի հաշվարկը, օգտագործողի կառավարումը, համակարգի աշխատանքի ժամկետները, ճառագայթման ժամկետը, ինքն ստուգումը, միացման ժամանակ, էներգախնայողության և որոնման պատկերը, ավտոմատ կերպով պահպանման և ավտորոշման համակարգը, պատկերի ճանաչման դասընթաց
- Շրջանակի չափը՝ 187x852x1256 մմ կամ համարժեք,
- Քաշը՝ 450 կգ կամ համարժեք,
- Շրջակա միջավայրի ջերմաստիճանը / խոնավությունը՝ - 10°C ~ +45°C/5% ~95% (առանց կոնդենստի)

- Պահպանման ջերմաստիճանը / խոնավությունը՝ -40 60 + 60 °C / 5% ~ 95% առանց կոնդենստի)
- Հզորություն՝ 220VAC (+/-10%) 50/60Հց
- Սպառում՝ 0.7KVA
- Աղմուկի մակարդակ՝ <55db

Համակարգիչ՝

- Մայրական սալիկ (motherboard) առնվազն B360 Chipset կամ համարժեք:
- Պրոցեսոր (processor)՝ Intel i5 կամ համարժեք, առնվազն 8-րդ սերնդի և առնվազն 4 միջուկ, հիշողությունը՝ առնվազն 9MB SmartCache:
- Օպերատիվ հիշողություն (RAM)՝ առնվազն 8GB (4GBx2 or 8GBx1), առնվազն 2400MHz DDR4 Non-ECC SDRAM կամ համարժեք:
- Կարծր մարմնային կուտակիչ (SSD)՝ առնվազն 256GB, M.2 PCIe SSD կամ համարժեք,
- Վիդեո քարտ (video card)՝ մայրական սալիկում ինտեգրված, առնվազն HD Graphics 630 կամ համարժեքը:
- Համակարգչային ցանցայի միացումներ՝ 1 x Gigabit Ethernet Controller RJ-45, 802.11bgn, BT4.0 կամ համարժեք:
- Արտաքին միացումների հնարավորություններ՝ Front IO ports: 2x USB 3.1 Gen 1 Type-A, Universal audio jack, 5:1 Media card reader, Rear IO ports: 4x USB 2.0, Gigabit Ethernet, HDMI, VGA, 3-stack audio jacks supporting 5.1 surround sound կամ համարժեք:
- Ձայնային սարքավորումներ՝ ինտեգրված ձայնային քարտ:
- Իրան (Case)՝ Tower: Հոսանքի սնուցման սարք (Power supply unit)՝ պետք է լինի առնվազն 280W, հովացուցիչ (cooler) (APFC – Full range or EPA Bronze – Full range) կամ համարժեք
- Հոսանքի Լարը-Եվրոպական կամ համարժեք,
- Գծային լարում՝ 100–240 VAC, 50–60Hz
- Չափսեր՝ (WxHxD) 160mm (6.3”) x 373.7mm (14.7”) x 289.4mm (11.4”), թույլատրելի շեղում՝ 5 %
- Քաշ՝ Starting Weight: 5.27kg (11.6 lbs), թույլատրելի շեղում՝ 5 %

Մոնիտոր (Monitor 22 inch)՝

- Օգտագործվող հատվածի անկյունագծի չափսը առնվազն 21.5" դյույմ,
- Լետայնությունը՝ առնվազն 1920x1080 Full HD clarity կամ համարժեք,
- Հաճախականությունը՝ առնվազն 60Հց,
- լայնակերան 16:9 հարաբերակցությամբ, (դիտարկման անկյունները առնվազն 90° հորիզոնական և 65° ուղղահայաց,
- հակադրությունը 600:1, (դինամիկ) պայծառությունը առնվազն 200 կ/դ, արձագանքը առնվազն 5մվ, միացման միջերեսը VGA կամ համարժեքը:
- Ստեղնաշար համակարգչային (Keyboard)՝ գործարանային անգլերեն և ռուսերեն տառատեսակներով, ստեղնաշար համատեղելի MS Windows համակարգերի հետ: Մկնիկ համակարգչային

	<p>(Mouse)՝ օպտիկական, լարային: Կոճակների քանակը՝ առնվազն 3, ներառյալ անիվի կոճակը:</p> <p>Անխափան սնուցման սարք՝</p> <ul style="list-style-type: none"> • Տեսակը՝ Line interactive կամ համարժեք, • Մուտքային՝ • Վոլտաժ՝ Required AC 160~280V • Ֆազերի քանակը՝ Single phase +G • Հաճախականությունը՝ 50Hz ± 5% • Ելքային՝ • Վոլտաժ՝ AC 220V ± 10% (mains) • Հզորությունը՝ 850VA (510W) • Հաճախականությունը՝ 50Hz ± 1% • Crest factor 3:1 կամ համարժեք, • Անցման ժամանակը՝ ≤ 10ms • Սոկտեներ՝ 2 x Universal (Multi-type) • Մարտկոց՝ Backup 20 minutes կամ համարժեք, • Լիցքավորում՝ 90% հզորությունը 8 ժամվա ընթացքում • Հզորության գործակիցը PF = 0.6 (եթբ մուտքային տիրույթը -35% -23%, PF = 0.45) • Transformer E Type կամ համարժեք, • Աղմուկի մակարդակը է 45dB (1 meter) • Աշխատանքային միջավայր՝ 0 –ից -40C • Խոնավությունը՝ 20 ~ 90% (ոչ կոնդենսացված) <p>• Չափսեր՝ 278x100x139 մմ կամ համարժեք:</p> <p>Վերը նշված տեխնիկական բնութագրով համակարգիչի բոլոր բաղադրատարրերը պետք է լինեն նոր, և գործարանային արտադրության:</p> <p>Լրացուցիչ պայմաններ՝ Համակարգիչը, ստեղնաշարն ու մկնիկը պետք է լինեն նոր, կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային և արտադրված նույն արտադրողի կողմից:</p> <p>Լրացուցիչ պայմաններ՝ Երաշխիքային ժամկետն առնվազն 1 տարի: Բոլոր սարքավորումների Երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական ավտորիզացված սպասարկման կենտրոնում և/կամ սերտեֆիկացված մասնագետի կողմից: Բեռնումը, տեղափոխումը (Պատվիրատուի կողմից տրամադրված հասցեներով՝ ք. Երևան և ՀՀ մարզեր) և բեռնաթափումը կատարվում է Մատակարարի միջոցների հաշվին:</p> <p>Տեղադրումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից նախապես տրամադրված և հարմարեցված տեղերում:</p>
--	---

Ուսումնասիրելով վերոհիշյալ տեխնիկական բնութագիրը, գտնում են, որ այն չի բխում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 13-րդ հոդվածի, Կարգի 22-րդ կետի պահանջներից, քանի որ, չնայած այն հանգամանքին, որ գնման առարկայի մի շարք տեխնիկական հատկանիշներ սահմանելիս նախատեսվել են

միջակայքեր, այնուամենայնիվ զուգահեռ նախատեսվել են այնպիսի հստակ տեխնիկական պահանջներ (օրինակ՝ թունելի չափը՝ 600 x 400 մմ կամ համարժեք, կոնվեյերի բարձրությունը՝ 693 մմ կամ համարժեք, շրջանակի չափը՝ 187x852x1256 մմ կամ համարժեք, քաշը՝ 450 կգ կամ համարժեք, անխափան սնուցման սարքի չափսեր՝ 278x100x139 մմ կամ համարժեք, երթափանցում՝ 38 մմ պողպատե վահանակ և այլն), որոնք կարող են էականորեն սահմանափակել ընթացակարգի հնարավոր մասնակիցների շրջանակը:

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված հստակ չափսերին զուգահեռ նախատեսվել են «կամ համարժեք» բառերը, այն դեպքում, երբ չափսերը հստակ են և չեն կարող ունենալ համարժեք այլ չափսեր, ուստի վերոհիշյալ հատկանիշները սահմանելիս անհրաժեշտ է նախատեսել համապատասխան միջակայքեր, նվազագույն կամ առավելագույն սահմաններ, հնարավոր շեղումներ, որոնք թույլ կտան հնարավորինս ընդլայնել մրցույթի մասնակիցների շրջանակը և միևնույն ժամանակ ապահովել այն կարիքի բավարարումը, որի նպատակով հայտարարվել է մրցույթը:

Այսպիսով՝ տեխնիկական բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, միևնույն ժամանակ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի և «Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքները հիմնավոր են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից 24.10.2019թ. ներկայացված բողոքը բավարարել, իսկ «Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից 28.10.2019թ. ներկայացված համանման բողոքը մասնակի բավարարել:

Պարտավորեցնել «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ